



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Dr. Armond Aghakhanian, President  
Steve Frintner, Vice President  
Charlene Tabet, Clerk  
Steve Ferguson  
Dr. Roberta Reynolds

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

7-2-2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Հուսով եմ, որ բոլորդ կկարողանաք վայելել հուլիսի 4-ի տոնը:

### **2020-21 ուսումնական տարում դպրոցների բացումը**

Դպրոցները բացելու կոմիտեն փաստաթուղթ է մշակել, որտեղ ամփոփում է իր կատարած աշխատանքը: [Մեղմել այստեղ](#) այդ փաստաթղթի հետ ծանոթանալու համար: Խնդրում ենք նշել, որ տրված տեղեկությունը կարող է փոփոխվել ըստ տեղական առողջապահական պայմանների և մեր աշխատակիցների արհմիությունների բանակցությունների: Մենք դեռ սպասում ենք Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակի հրամաններին, որոնք վերաբերվում են կրթությանը: Մենք կվերանայենք այս հրամանները և անհրաժեշտության դեպքում, կտեղեկացնենք մեր պլանների մասին: Մրանք պաշտոնական առողջապահական հրամաններ են, որոնց մենք պետք է հետևենք դպրոցները բացելու ժամանակ:

Ահա այս շաբաթվա մի քանի կարևոր նորություններ.

- **Գնահատականներ.** Մյուս ուսումնական տարվա ցանկացած մոդելի ընթացքում, բոլոր աշակերտները կստանան ավանդական չափանիշների վրա հիմնված կամ տառային գնահատականներ:
- **Հիբրիդ դասացուցակ.** ԱՄ-12-րդ դասարանցիները դպրոց կհաճախեն երկուշաբթիից մինչև հինգշաբթի առավոտյան/կեսօրից հետո մոդելով, իսկ ուրբաթ օրերին՝ տանը 100% հեռակա ուսուցման մոդելով: Միջանկյալ և միջնակարգ դպրոցներում բոլոր 6 դասընթացները կդասավանդվեն ամբողջ կիսամյակի ընթացքում: Խնդրում ենք օգտվել դասացուցակից:
- **Հեռակա ուսուցման մոդել.** Մենք դեռ հեռակա ուսուցման մոդելի մի քանի տարբերակներ ենք ուսումնասիրում: Կուղարկենք լրացուցիչ տեղեկություն:
- **Մոդելի ընտրություն.** Մի քանի շաբաթվա ընթացքում, էլեկտրոնային նամակի միջոցով, դուք կընտրեք ուսուցման մոդելը (հիբրիդ կամ 100% հեռակա ուսուցում) աշնանային կիսամյակի համար: Մենք գիտակցում ենք, որ դուք բազմաթիվ հարցեր ունեք տալու և առողջական վիճակը փոփոխվում է:

Այնուամենայնիվ, մենք պետք է սկսենք դասացուցակ մշակել օգոստոսի 17-ի համար: Եթե դուք չընտրեք ոչ մի տարբերակ, ձեր երեխան, ինքնաբերաբար կտեղադրվի հիբրիդ մոդելի մեջ:

Լրացուցիչ տեղեկություն կարող եք ստանալ հուլիսի 16-ին կայանալիք կրթական գրասենյակի հերթական ժողովի ընթացքում, որը տեղի կունենա երեկոյան ժամը 7-ին:

Ընթացիկ տեղեկություն կարելի է ձեռքբերել այս կայքում <https://www.burbankusd.org/Reopening>. Հաճախակի տրվող հարցերը (FAQs) կարելի գտնել այս կայքում <https://www.burbankusd.org/reopeningfaqs>. Դպրոցները բացելու վերաբերյալ առաջարկները կարող եք ուղարկել այս հասցեին [re-opening@burbankusd.org](mailto:re-opening@burbankusd.org).

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Շիլլ  
Գերատեսուչ